Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտուէլ յերկուշաբթի, 28 Հոկտեմբերին, այցելեց Տաւուշի մարզի Իջևանի յարակից սահմանային հատուածը, ուր ականազերծման աշխատանքներ կը կատարուին սահմանային գոտիի Ազատամարտի մէջ գեհովիտ գիւղերու տարածքին: Մատուցուած է մէկ մտուան ընթացքին արդէն ականազերծուած է նշեալ տարածքի կէսէն աւելին: Ականազերծման աշխատանքները պիտի դադրին մօտ օրէն եւ պիտի վերսկսին յառաջիկայ գարնան: Յայտնեք, որ Տաւուշի մէջ 10 հազար հեկտար հողատարածք մնացած է անմշակ՝ ականներով պատուած կամ վտանգաւոր գոտի ըլլալուն պատճառով: Ականազերծման աշխատանքները սկսան անցեալ Մարտի հիմնուած Հայաստանի Ազգային ականազերծման կեդրոնի կողմէ՝ մասնակցութեամբ ամբողջական մասնագէտներու: Կեդրոնը հիմնուեցաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան, պաշտպանութեան նախարարութեան եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան կողմէ եւ իր տեսակին մէջ ցարդ միակն է ամբողջ Անդրկովկասի մէջ:



# ԱՉԱԿՈՒՐԱՅԻՆ ՀԷ

## ԳԷՊԻ ՈՒՐՈՅՆ ՈՃ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սարեանի, Մի- նասի եւ Ռ. Էլի- բէկեանի եռաս- տիճան սերունդ- ներէն ետք, հայ- րենի գեղանկա- րէինքէն քիչեր միայն կրցան հե- ուանալ անոնց ծի- րէն ու գիմել դէ- պի ինքնատպու- թիւն տանող ստեղծագործա- կան կեանք: Այդ քիչերէն է Արշակ Ներսիսեանը, որ իր նախորդներու նման, որոշ չա- փով արեւմտեան ազդե- ցութիւններ կրելով հան- դերձ, արդէն իսկ ճշդա- ձ է իր ստեղծագործական սեփական ուղին, որ ուղ- ղակիօրէն զինք կ'առաջ- նորդէ դէպի ուրոյն ոճ



«Բնակար». գործ՝ Արշակ Ներսիսեանի

կ'աւարտէ նաեւ Երեւա- նի գեղարուեստաթատե- րական բարձրագոյն հիմ- նարկը: Այնուհետեւ, կա- տարեւազործուելու հա- մար կը մեկնի Ս. Փե- թերսպուրկ, ուր կը հե-

ւեստական խմբագիր: 1985ին եւ 1996ին կը մաս- նակցի խմբային շարք մը ցուցահանդէսներու, Ֆինլանտայի, Իրանի, Չեխիոյ եւ Գերմանիոյ մէջ:

1996էն ի վեր ան կ'ապ- րի եւ կը ստեղծագործէ Վառնա (Պուլկարիա), ուր ցարդ կազմակերպած է անհատական ինը ցու- ցահանդէսներ: Պուլկա- րիոյ եւ յատկապէս մայ- րաքաղաք Սոֆիայի մէջ ան կ'արձանագրէ մեծ յաջողութիւններ: Անոր ստեղծագործութիւննե- րէն ոմանք մաս կը կազ- մեն վարչապետ Միմէոն Բ.ի եւ խորհրդարանի նախագահ Օկնեան կեր- ճիկովի նման անձնաւո- րութիւններու հաւաքա- ծոներուն:

Արշակ Ներսիսեան առանկաբար կը պատկե- րէ քննակարծներ, անկեն- յան րնութիւններ եւ կերպարային համա- դրումներ: Գեղանկար- չական այս երեք տեսակ- ներուն մէջ ալ ան կը յա- յուրի հաւասարապէս: Ուշագրաւ եւ յատկապէս անոր գունային արտա- յայտչականութիւնն ու կենսունակ շարժման առկայութիւնը:

Ի ծնէ օժտեալ այս գե- ղանկարիչին արուեստին հիմք կը թուի ըլլալ սե- րը: Նոյնիսկ երբ ան ծա- ղիկներ կամ բնութեան տեսարաններ կը պատկե- րէ, անոնց հանդէպ սիրոյ եւ քննուշ վերաբերում մը կը զգացուի: Իսկ զոյ- գերու պարագային կեր- պարները մեծապէս ար- տայայտիչ են՝ դրսեւորե- լով սիրոյ զգացական ջինջ վիճակներ: Այս շար- քի գեղանկարները սիրոյ պատմութեան շարունա- կական դրուակներ կը պատկերեն կարծես եւ պատմութիւն մը նման «կ'ընթերցուին»: Այս շարքին մէջ առանձնա- յատուկ տեղ կը զբաւէ «Մենաւոր սիրահարը» կտաւը: Հոս՝ մերժուած պարմանուհին միտքա- րութիւն կը փնտռէ բնութեան գեղեցկու- թեան մէջ ծաղիկներ հա- ւաքելով:

Արշակ Ներսիսեան եր- բեմն հակամէտ է նաեւ շօշափելու այլ թեմաներ, որոնց արդիւնք են «Տոն Բիշոփ» կամ «Յլամար- տը» գործերը: Այս կար- ղի կտաւները եւ լի են յուզականութեամբ: Առաջինի պարագային արուեստագէտը կը փոր- ըրէ վեհի ընդմէջէն, իսկ երկրորդի պարագային, ուժի ցուցադրութիւնը շարժումի թափի ընդմէ- ջէն:

### ԵՆՆԴԵԱՆ 75ԱՍԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

## ԳՐԻԳՈՐ ԱՂԱՍԵԱՆ

Հայրենի արժանաւոր գեղանկարիչներէն է Գրի- գոր Աղասեան: Ան թեւ ծանօթ է իբրեւ գունա- նկարիչ, սակայն անոր գծանկարները աւելի ու- շագրաւ եւ արտայայտիչ են: Իր ստեղծագործա- կան կեանքին մասին ընդհանուր գաղափար մը կազմելու համար ստորեւ կու տանք Ռ. Պար- սամեանի մէկ ակնարկը:

Հայրենի արդի կերպարուեստում ճանաչուած, իր ուրոյն տեղն ունեցող գեղանկարիչ է Գրիգոր Աղա- սեանը: Նա հանրապետական, համամիութենական, ինչպէս նաեւ արտասահմանում կազմակերպուող ցուցահանդէսներում հիմնականում հանդէս է եկել կերպրնկալ, քեմաթիք համադրական գործերով: Այդ աշխատանքներին մասին բազմիցս գրուել է մամու- լում. ասուել են թէ՛ դրուատական եւ թէ՛ քննադա- տական խօսքեր: Աղասեանի քեմաթիք-կերպրնկալ կտաւ- ները միշտ աչքի են ընկել զրա- ղէտի կատարմամբ, մտածե- լակերպի յստակութեամբ ու նպատակասլացութեամբ, սա- կայն միշտ չէ, որ բաւարար է եղել նրանց զգացական, ներ- գործող ուժը: Որոշ կտաւնե- րում զգացում էր ստեղծա- գործական հնարաւորութիւն- ների դրսեւորման կաշկան- դուածութիւն: Թուում էր, թէ նկարիչը քաշուում է աշխար- հնկալման իր բանաստեղծա- կան կերպարներին եւ աշխա- տում է նրանք վերածել յստակ հասկացողութիւննե- րի:

Վերջին տարիներին Աղաս- եանը զգալի աշխատանք կա- տարեց ստեղծագործական ինքնակաշկանդման յարթա- հարման ուղղութեամբ:

Նրա գործերում գերիշխողը բնապատկերն է, հենքը մար- ղու եւ բնութեան փոխադարձ կապն է: Աղասեան - բնանկա- րիչը չի փնտռում արտակարգ

ու եզակի վայրեր, գունային շլացնող հատուածներ կամ զարմացնող հակադրութիւններ: Սովորականի, ամէնօրեայի մէջ է տեսնում նա իսկական գեղեցիկի ուժն ու հմայքը. նրա համար հաւասարապէս սիրելի ու հարազատ են թէ՛ այսպէս կոչուող «մաքուր բնու- թիւնը» եւ թէ՛ մարդու ձեռքով վերափոխուող ու վե- րաշինուող քաղաքը: Բնութիւնը Աղասեանի համար միաժամանակ գունային ընկալումների անհատում աղբիւր է: Որպէս իսկական գեղանկարիչ, օգտագոր- ծելով գունային երանգների անսահման հնարաւորու- թիւնները, Աղասեանը կարողանում է ստեղծել գե- ղանկարչական մեթաֆորներ, որոնք զգացական են իրենց կերպարայնութեամբ եւ դաստիարակիչ իրենց նպատակասլացութեամբ:

Այս առումով բնորոշ են տարուան չորս եղանակ- ներին նուիրուած պատկերաշարը: Տարբեր կտաւնե- րում պատկերուած է Երեւան- եան միեւնոյն տեսարանը:

Առաջին հայեացքից տեսա- րանը թուում է պատահական: Պատահականութեան այդ տպաւորութիւնը անցնում է շուտով: Գունային մեղմ ան- ցումներին յաջորդող հակա- դրութիւնների, հիւթեղ վրձնա- հարուածների ու սատափեայ նրբերանգների շնորհիւ դի- տողի առջեւ բարձրանում է արտաքինապէս հանգիստ թուացող քաղաքային անկի- նում ծաւալուող հարուստ ու բովանդակալից կեանքի յու- գիչ պատկերը:

Մտերմիկ ջերմութիւն եւ ոչ թէ ցուրտ կայ քաղաքը պար- րուրող ձեան ճերմակի տակ, արեւից շիկացած տանիքների հրաբորբ, լարուած կարմիրի իմաստաւորում են ստուերի իոհական կապոյտները, գար- նան զարթօնքի խոնգայոյզ գմբուխտից յետոյ աշնան մա- յախապատ մշուշում մտոր- ւում ու յուշ կայ, ինչ որ սպա- րում անձանթի ու ցանկալի:



«Խաղաղ նրբանցք», 1966. գործ՝ Գրիգոր Աղասեանի

### ՀԱԿԻՐԾ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ԳՐԻԳՈՐ ԱՂԱՍԵԱՆԻ



«Աղջկայ գլխանկար», 1962. գործ՝ Գրիգոր Աղասեանի

Գրիգոր Խրդեհի Աղասեանը ծնուել է 1926 թուականին, Երեւանում: Նախնական մասնագիտական կրթութիւնը ստացել է Երեւանի Փ. Թերլեմեզեանի անուն գեղարուեստի ուսումնարանում, որն աւար- տել է 1944ին: Նոյն թուականին մեկնել է Մոսկուա եւ ընդունուել Վ. Ի. Սուրիկովի ան- ցան պետական գեղարուեստական բարձրա- գոյն հիմնարկի գեղանկարչութեան բաժնի: 1950 թուականին աւարտելով հիմնարկը վե- րադառնում է Երեւան եւ գործօն կերպով ներ- գրաւում Հայաստանի նկարիչների Միութեան ստեղծագործական եւ հասարակական կեանքին: 1950ից մասնակցում է հանրապետական, համամիութենական, ինչպէս նաեւ արտասահ- մանեան ցուցահանդէսներին:

Նրա աշխատանքները ցուցադրուել են ոչ միայն Հայաստանում, այլեւ թիֆլիսում, Մոսկուայում, Ռիկայում, Թալինում, Լեյնին- կրատում եւ Սոֆիայում:

Գեղանկարիչ է Աշխատում է թեմաթիք հա- մադրական նկարի, բնանկարի, դիմանկարի, ինչ- պէս նաեւ գրքի նկարազարդման բնագաւառում:

1950 թուականից սկսած ստեղծագործու- թեանը զուգընթաց զբաղւում է մանկավարժա- կան գործունեութեամբ:

1951 թուականից Հայաստանի նկարիչնե- րի Միութեան անդամ է:

1959 թուականից յանկա ընտրուել է նկա- րիչների Միութեան նախագահութեան եւ վարչ- ջութեան կազմում:

1961ին Գ. Աղասեանին շնորհուում է Հայ- կական ԽՍՀ վաստակաւոր նկարչի պատուա- ւոր կոչում:

Աղասեանի լաւագոյն բնապատկերները իրենց չա- փերով փոքր են, սակայն նրանք դրուակներ չեն, այլ աւարտուած գործեր են ինչպէս արամադրութեամբ ու բովանդակութեամբ, այնպէս էլ՝ կատարման վարպետութեամբ: Նրա «Պատշգամբում», «Գարուն. Կտուրներ», «Կոմպոզիտորների տունը», Սեւանն ու Արարատեան դաշտավայրը պատկերող բնապատկեր- ները այս տեսակէտից նշանակա- լից են մեր արուեստ- տուում:

Հայն է Աղասեանի հետաքրք- րութիւննե- րի ոլորտը. հայկական բնաշխարհի կողքին, դի- տողի առջեւ բարձրա- նում են լե- հական ու վրացական բնապատ- կերներ, տե- սարաններ վենետիկից, Պրիւսիայից, Թալինից: Նկարչին յուզում է շրջապատի ճանաչմանը ձգտող մանկական ներաշխարհը, ինք- նաւորոյն ստեղծագործական կեանքի շեմին կանգնած սպազայ արուեստագէտների աշխատանքն ու դժուարութիւնները:

Չուսպ, առանց աղմուկի, գեղանկարչական հնարքներով արուեստագէտը հաղորդակից է դարձ- նում գիտողին իր աշխարհի հետ: Այն յուզել է, ջերմ ու սրտամօտ:

Ռ. ՊԱՐՍԱՄԵԱՆ



«Պրագիւլացի աղջիկը», 1960. գործ՝ Գրիգոր Աղասեանի

### «ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիր խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնումնք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԴԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն է: Մահագո կ'ընդունուի մինչեւ ոչ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



«Մենաւոր սիրահարը», գործ՝ Արշակ Ներսիսեանի

ու սեփական ոլորտ: Ներսիսեան ծնած է Երեւան, 1952ին: Աւարտել է ետք Փանոս Թերլե- մեզեանի անուն գե- ղարուեստից ուսումնա- րանը, կ'ընդունուի եւ

տեւի համապատասխան դասընթացներու: 1988- 1994 Ներսիսեան մաս կը կազմէ «Հայաստանի Աշխատաւորների» ամ- սագիրի խմբագրական կազմին՝ իբրեւ գեղար-

**ԱՅՀԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿԸ, ԿԱՆՍԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ, ST. MARC ԱԵՏԱԾԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՆԵՏ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ ՆՈՅՄԵՐԻ ԱՄՍՈՒԱՆ ԸՆԹԱՅԻՆ Կ'ԸՆԾԱՅԷ ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ՝ MAMMOGRAPHIE + ECHO**

**50000 L.Ո. ՓՈԽԱՆ 150000 L.Ո. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՆ ԱՅՀԻԼԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՉ, ԱՄԵՆ ՕՐ ԱՈՒԹՈՏԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԵՆ 4:30:**

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹԻՒՎ ԿՏՐՈՆԵՐ**



ԱՅՍ ԱՌԻԹՈՎ ԻՒՐԱԳԱՆՉԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԶՐԻՕՐԸ ՊԻՏԻ ՕԺՏՈՒԹԵՆԵԹ MEDNET INFO-SANTE ԲԺԾԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ ԷՆՈՒԱԶԱՅՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԷՉ ՏԱՐՈՒԱՆ ՔԱՐՏՈՎ:

ԱՅՀԻԼ ԱՅԷՏԻ ՇԷՆՔ, Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

# Կայ Կրուտայագիտություն

## ՍՈՓՐԱՆՕ ԵՐԳՉՈՒՆԻ ԻԶԱՊԵԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ ՊԵՐՔԼԻԻ ՄԷՉ

ԸԱԼԻՖՈՐՆՈՅ «ԸՆԹՐԱ ԸՆՍԹԱ ԹԱՅԱ» ԹԵՐԹԻՆ ՄԷՉ ԾԻՈՐՃԻԱ ՈՒՈՒԻ Կ'ԱՆԴՐԱԴՈՒՆԱՅ ԸԱՆԱՏԱԿԱՅ (ԾԱԳՈՒՄՈՎ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ) ԵՐԳՉՈՒՆԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ: ՈՒՐԱՆԱԼԻ ԵՐԵՒՅԹ Է, ՈՐ ՇԵՏՉԵՏԷ ԱՒԵԼԻ ՄԵԾ ԸՈՉԱԿ ԿԱՅԵԼՈՂ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒՄԻ ԻՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԺԱՄԲՈՎ ԸԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԳԸ ԿԸ ԾԱՆՕԹԱՑՆԵ ՕՏԱՐՆԵՐՈՒՆ:



«Տը Սան Ֆրանսիսկո Էրոնիքո» քերթին մեջ ճոշուր Էնսոման կը գրէ, թէ Պայրագատարեանի զգացական անմիջականութեամբ մատուցած հայկական 6 երգերը տարաշխարհիկ երանգէ մը աւելին ընձեռնեցին:

Երբ երգչուհի մը օժտուած է իզապէլ Պայրագատարեանի նման փայլուն եւ ճկուն ձայնով, դիւրին պիտի ըլլար կատարել այնպիսի համերգներ, որոնք կը ծառայեն արհեստագիտական հմտութեան ցուցադրութեան:

արուեստագիտուհի մըն է: Իրեն համար կարեւոր են իր ընտրած նիւթերուն իմաստն ու նպատակը: Թատերականութեան այս սուր զգացողութիւնը զայն վերածած է օֆերայի աշխարհին մէջ շատ արագ փայլող երիտասարդ աստղի մը: «Էրգ Նոյ»-ի մէջ Կիրակի յետմիջօրէին անոր զերգանց համերգին իւրաքանչիւր վայրկեանը լուսաւորուած էր այս յատկանիշով:

«Քայ Փրոֆորմընսը» ընկերակցութեան հովանաւորութեամբ կազմակերպուած համերգին ընթացքին 27 տարեկան քանատահայ սովորանօ երգչուհին փոքրաթիւ բայց գնահատող հանդիսատեսներ առինքնեց սպանական, իտալական, հայկական, ռուսական, անգլիական եւ ֆրանսական երգերէ բաղկացած իր յայտագիրով: Մարթին Քացի դաշնակի զգայուն ընկերակցութեամբ անոր կատարումը ցարդ աշնան եղանակի ամէնէն գեղեցիկ համերգներէն մէկը պարզեց:

Պայրագատարեան, որ կ'ապրի Թորոնթօ, տակաւին անձանօթ անուն մըն է Պէյ Էրիայի մէջ (անոր տաղանդը մսխուեցաւ անցեալ տարին Սան Ֆրանսիսկոյի օֆերային կողմէ ներկայացուած «Տը մերի ուիտօ» օֆերային մէջ Վալենտինի դերին կատարողութեամբ):

Սակայն պատկերը պիտի փոխուի յառաջիկայ քանի մը տարիներուն: Պայրագատարեանի

ձայնը օժտուած է բոլոր արժանիքներով. զատորոշուող ձայն մը՝ յարատեւ գեղեցկութեամբ, ուժականութեամբ եւ ճկունութեամբ, լեցուն եւ յստակ՝ ձայնային ցած ալիքներով: Կրակի եւ շողողուն՝ բարձր ձայնանիշներու վրայ:

Աւելին. Պայրագատարեան ունի պատկերներ եւ զգացումներ արտայայտելու ուշագրաւ կարողութիւնը: Կիրակի օրուան համերգին յայտագիրին մաս կազմող իւրաքանչիւր երգի բանաստեղծական խորքը արտացոլաց այնպիսի պերճախօսութեամբ, որ յատուկ է երգչուհեան ստի բարձր մակարդակ նուաճած երգչիններուն:

Թատերականութեան եւ իմաստութեան միջեւ հաւասարակշռութիւնը ակներեւ էր համերգին առաջին վայրկեաններէն: Էնթը կրանտոսն սպանական 6 երգերու շարք մը երգելով՝ Պայրագատարեան ոգեկոչեց փորձութեան մատնող զգայնութեան բուրբոնաւէտ աշխարհ մը: Վերջին երգը՝ «Տը Վուլմըն Էնտ տը Ըալթիլիկէլ» պերճախօս կերպով պատմեց կախարդական սիրով մասին:

Թէեւ Պայրագրի «ձգնաւորի երգերը» որոշ կտորով անցում մը նշեցին, սակայն երգչուհին արտաբերեց այս երգերուն առաւելագոյն հմայքը: Ան իր լայնտական բանաստեղծութիւններու վրայ հիմնուած կախարդական յօ-

րինումները լուսարձակեց իւրեղծ ճշգրտութեամբ, իւրաքանչիւրը մատուցելով շողորձակ կատարողութեամբ:

Պայրագատարեան վիճակաբար «Ին քուրպաթօ մարէ իրաթօ» (զայրացած ծովուն փոթորիկին մէջ) երգով յանդգնեցաւ մուտք գործել Չեչիլիա Պարթոլի բնագաւառը: Անոր ձայնային ցոլքը եւ շունչը հակակշիռի տակ պահելու սպաւորիչ կարողութիւնը վճռորոշ արժանիքներ էին այս պարագային: Երգչուհին նուրբ մօտեցումով «բանակցեցաւ» վիճակաբար կրկար տողերուն զգայունեց եւ անկիւնադարձային բաժիններուն հետ: Քացի դաշնակի հատու ընկերակցութեամբ ան յայտագիրին առաջին մասը հասցուց ոգեկոչող աւարտի:

Բարձրագոյն այլ կէտ մը յարգեց դադարին, երբ Պայրագատարեան երգեց հայկական ժողովրդային երգեր՝ Ալան Յովհաննէսէն, Խաչատրեանէն եւ Բարսեղ Կանաչեանէն, որուն «Օրօր»ը յայտնապէս հիացումի յատուկ զգացում մը ստեղծած է երգչուհին մէջ: Երգիւնանքով եւ յուզականութեամբ մատուցուած Չայքոլսիէն 5 երգեր եւս գերազանցապէս հաղորդական էին:

Պայրագատարեան երկու անգամ բեմ հրաւիրուեցաւ կրկնելու համար պրագիլցի երաժիշտ Խայմէ Օվալչի «Ագուլաթօ» եւ Տեիլպէյի «Լէ Թիլ տը Քատիլ» երգերը:

## ՆՈՐԱՓԹԻԹ ԱՍՏՂ ՄԸ

«ՈՈՅԹԵՐԸ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ 14 ՏԱՐԵԿԱՆ ԱՍԵՐԻԿԱԿԱՅ ԵՐԳՉՈՒՆԻ ԹԱԼԻՆ ԸԱԼՊԵԱՆԸ, ՈՐ ՕՓԵՐԱՅԻ ԱՅԽԱՐԸՆ ՍՈՒՏԵ ԿԸ ԳՈՐԵ ՓՈՓ ԵՐԱՃՏՈՒԹԵԱՆ ՍԱՐՁԸ

Թալին Քալպեան ունի ամերիկացի դեռուտի աղջիկներու յատուկ բազմաթիւ յատկանիշներ. ան կը սիրէ պտուի իր բարեկամներուն հետ, Փուլթալի ինչպէս եւ փամբերով հետեւիլ «Էմ. Թի. Վի.»-ի փառաբանական յայտագիրներուն: Անոր լեզուով համեմատած է օսում (երկրագոյն) բառին նման արտայայտութիւններով եւ ան կը պաշտէ փոփ երաժշտութեան «Պլեքսթրի Պոյզ» խումբը:

Սակայն ան սովորական մանկամարդ աղջիկ մը չէ:

Թալին իր տան պարտականութիւնները եւ արտադրողական զբաղումները, ինչպէս՝ թենիս, պար եւ լաբորա, աւարտելէ ետք, օրական առնուազն երկու կամ երեք փամ կը յատկացընէ ձայնամարզութեան եւ իր սեփական երաժշտութիւնը յորինելու:

Գործ չեմ համարեր ստիկա. կ'ըսէ շագանակագոյն մագերով նիւար աղջնակը, որ կը յաճախէ «Ֆրիթ Զիլ» երկրորդական վարժարանը եւ իր կարելին ի գործ կը դնէ Պրիթնի Սփորթի նման գերաստղ մը դառնալու համար:

Թալին 9 տարեկանին արդէն դերեր կատարած է 9 օֆերայներու մէջ, որոնք ներկայացուած են Ուաշինկթընի մակարդակաւոր Քենտի կեդրոնին մէջ: Ան Փլասիտօ Տոմինկոյի հետ բեմ բարձրացած է «Փակիլալի» օֆերային մէջ եւ երկու անգամ երգած է զէպի Երուսաղէմ եւ Բեթղեհէմ Յովհաննէս Պօղոս Բ. պապին պատմական այցելութիւններուն առիթով, 2000ին:

Թալին 12 տարեկանին Ամերիկայի ազգային քայլերը երգած է Ուաշինկթընի Էմ. Սի. Այ. կեդրոնին մէջ, Ուաշինկթընի Ուիլիամսոն պատմամշակութիւն խումբին մէջ մրցումին բացման առիթով: Անոր երգը այնպիսի խանդավառու-

թիւն ստեղծած է, որ 14 հազար բազմութիւնը սրտարուի բացազանչութիւններով քաջալերած է երգը: Նոյն տարին ան զբօսաշրջիկներու բազմութեան մը համար երգած է Սպիտակ Տան մէջ:

Այս օրերուն Թալին կը ձայնագրէ «Կատալիս Ամերիքա» եւ «Ամերիքա իգ պիուրի-ֆուլ» հայրենասիրական երգերուն մէկ համադրումը, զոր ան կատարած է Ապրիլ 10ին, Ամերիկայի Արարական Հիմնարկին տարեկան կալիֆոռնիա առիթով, որուն ներկայ էին Սթիւկ եւ Յորդանանի Նուր թագուհին, ինչպէս նաեւ՝ ամերիկացի ներկայացուցիչներ եւ պաշտօնական այլ անձնաւորութիւններ:

Պիտի մտածէք, թէ Թալին պրկուած ջիդերով անձ մը ըլլալու է: Սակայն այդպէս չէ. ան չի տառապիր բեմական վախէ:

Իր փորձերը լաւ կատարած եւ իւրայատուկ ոճով օժտուած 14 տարեկան այս աղջնակը բառին բուն իմաստով կը կերպարանափոխուի բեմին վրայ եւ կը մոռնայ իր անշնորհ քաղաքը կամ մագին հետ խաղալու սովորութիւնը: Բեմին վրայ ան կը կանգնի ուղիղ, անոր շարժումները շնորհալի են եւ հաւասարակշռուած, իսկ սովորաւոր ձայնը քաղցր է, որ ունկնդիրներ յաճախ կը փշաքաղուին:

### ԳԱՍԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Թէեւ Թալին մեծ կարեւորութիւն կ'ընծայէ իր դասական ձայնամարզութեան, սակայն կը փայտայն ռիտմը, պլուզ կամ փոփ երգչուհի մը դառնալու երազը:

«Այդ ճամբուն վրայ եմ», կ'ըսէ Թալին՝ յիշելով անունները երգարուեստի իր կուռքերուն, ինչպէս՝ Ուիլիամսոն, Մարիա Քարէյ եւ Քրիսթինա Ակոլիլերա:

Թալին արդէն գրած եւ կատարած է առնուազն երեք երգ եւ վերջերս առիթ ունեցած է անոնցմէ մէկը ներկայացնելու Նաչվիլին երաժշտութեան ճարտարարուեստի մասնագետի մը, որ գայն տպաւորիչ զգացմէ է:

«Ասիկա մեծ իրագործում մըն է՝ տարիքով այսքան փոքր յօրինողի մը համար», կ'ըսէ պատկերասփիւռի մանկական յայտագիրներուն մասնագետ Ջիմ Էնթը, որ Թալին ծնողներուն հետ կ'աշխատի կերտել անոր ասպարէզը:

Թալին յաճախ կ'երագէ Լուս Անճելը տեղափոխուի, սակայն անոր ծնողները՝ Սիլվա եւ Հայկ Քալպեան իր փորձուն սանձ մը դնել եւ կ'ուզեն, որ ան նախ դպրոցը աւարտէ, որոշ հիմերու վրայ դնէ իր ապագան եւ ապրի իր մեծ քրոջ՝ Լորիի հետ, որ յառաջիկայ տարի համալսարան պիտի երթայ:

«Գիտակից ճիգով մը եւ շատ կարեւոր որոշումով մը գայն կը պահենք դպրոցին մէջ. կը բացատրէ Սիլվա Քալպեան, որ վերջինիս Ալեքսանտրիա շրջանին մէջ սեփականատէր է ձեռքով գծուած սալիկներու մեծ գործարանի մը: Չենք ուզեր զայն որեւէ ձեռով առանձնացնելը»:

Թալին կ'ըսէ, թէ իր ամէնէն լաւ բարեկամները իրեն հետ կը վարուին այնպէս՝ ինչպէս ուրիշներու հետ, թէեւ զինք երբեմն կը տեսնեն տեղական պատկերասփիւռի լուրերէն կամ իր մասին կը կարգան «Տը Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթին մէջ:

«Կարեւոր է մանկութիւն ունենալը եւ ուրախ ապրիլը. կ'ըսէ Թալին: Կրնամ հաւատալով իմ մասին կը կարգան «Տը Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթին մէջ: Սիլվա սկիզբէն զիտէր, որ իր կրտսեր աղջիկը իւրայատուկ տաղանդ մը ունէր: Օր մը ինքնաշարժին մէջ հայելին տեսնելու նայելով տեսած է, թէ Թալին, որ երկու ամսու էր, իր գլուխը կը շարժէր երաժշտութեան կշռոյթով: Երբ Սիլվա փոխած է ձայնասփիւռի կայանը, Թալին նոր երաժշտութեան համապատասխան կշռոյթով սկսած է շարժիլ:

Սակայն Սիլվա երեք չէ ապրած իր թեւերուն մէջ նորափթիթ աստղ մը գրկած ըլլալու կախարդական պահը: «Ասիկա պարագայն գործընթաց մըն է: Կ'անդրադառնա, թէ գաւազկը ընտրած է ուղիղ մը, եւ շունչը բռնած՝ կը փորձէ կարելի չափով քաջալերել», կ'ըսէ ան:

ՍԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸՆ  
Թալին, որ կը խօսի նաեւ հայերէն եւ ֆրանսերէն, հազիւ քանի

**ՀԱՅ ԳԻՐՔԻ**  
**24-րդ**  
**Զեղչ - Վաճառք**  
**ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ**  
Նոյեմբեր 8 - 24 նոյեմբեր 2002  
Անթիլիաս - Լիբանան

Կազմակերպութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսարանի ԳՐԱՍԱՆ  
Մասնակցութեամբ՝ Լիբանանի մ.ջ գործող բոլոր հայկական հրատարակչատներու եւ անհատ մասնակցողներու  
Պաշտօնական բացում  
Ուրբաթ, 8 Նոյեմբեր 2002.  
Երեկոյեան ժամը 6:00-ին. Կարողիկոսարանի «ԿԻԼԻԿԻԱ» թանգարանի սրահին մէջ:  
ՊԱՍՏԱՆ՝  
Մ.Օ.Տ.Տ. ԱՐԸՄ.Ա. ԿԸԹՈՒՄՎՈՍԻ  
Մեծի Տանն Կիլիկիոյ  
Ցուցահանդէսի տեղումը  
մինչեւ 24 Նոյեմբեր 2002.  
առատուեան ժամը 10.00-ին.  
Երեկոյեան ժամը 7:00:

մը տարեկան էր, երբ բարձրախօսի նման որբւէ իր առնելով ինքզինք երգչուհի կը ձեւացընէր:

Ապա օր մը, երբ 6 կամ 7 տարեկան էր, դիտեմ Ուիլիամսոնի Հիւսթոնի «Այլ ուոնթ քու տէնս ուիտ սամպատի» երգին վիտեօ-երկը եւ իր մէջ արթնացած է երգելու փափաք մը:

«Մտածեցի, թէ կ'ուզէի Ուիլիամսոնի Հիւսթոնի յըլլալ: Կը թուէր, թէ շատ հաճոյք կը զգար երգելով, կ'ըսէ Թալին իրենց ընդարձակ տան նստասենեակին մէջ:

Այդ տարին դրացի բարեկամուհիներու հետ ան ներկայացուցած է Ս. Մանդեան երգերու անպատասխան համերգ մը, որ բնականաբար վիտեոյի արձանագրուած է ընտանիքին կողմէ:

«Երբ օֆերայ սկսայ երգել 9 տարեկանիս, անդադարեալ, թէ կ'ուզէի երգչուհի դառնալ», կ'ըսէ Թալին:

Այժմ երաժշտական ասպարէզ մը կիրարկելու ճամբուն վրայ ան կը գիտակցի, թէ ամէն ինչ հաճոյք եւ խաղ չէ, սակայն նոյնիսկ չի մտածեր, թէ օր մը կրնայ չչալողիլ:

Երբ իրեն հարց կը տրուի, որ եթէ երգարուեստի մէջ աստղի չվերածուի, ի՞նչ ասպարէզ պիտի ընտրէր, ան կը պատասխանէ. «Բեմական արուեստի մէջ որեւէ բան: Կը սիրեմ զբնասանութիւնը, բայց չեմ ուզեր հրաժարիլ երաժշտութենէն, որովհետեւ անիկա մաս կը կազմէ կեանքիս եւ կերտած է զիս»:

«Ասիկա երագս է, եւ եթէ իրականանայ, ինձի համար լաւագոյն բանը պիտի ըլլայ. կ'ըսէ ան եւ կ'աւելցնէ. Սակայն չեմ ուզեր տարուիլ այս երագով, չեմ սիրեր յոխորտայն»:

Թալին նաեւ կը հաւատայ բարեգործութեան. ան երգած է մանուկներու օգնութեան նպատակով պատրաստուած ձայնագրութեան մը մէջ, ինչպէս նաեւ մաս կազմած է Ուաշինկթընի շրջանին մէջ շքաւոր մանուկներու համար խաղալիք գնելու նպատակով կազմակերպուած ձեռնարկներու:

Ժիմ Հայլէյի համար արտասովոր կերպով տպաւորել է Թալինի տաղանդը:  
Ան դեռուտի երգչուհիին հանդիպած է 3 տարի առաջ, ռոքերի ակումբի մը մէջ, ուր Սիլվա հրաւիրուած էր: Երբ Հայլէյ առաջարկած է երգ մը երգել, Թալին առանց վայրկեան մը տատամբուել հնչեցուցած է օֆերայի արիա մը:

«Ան օժտուած է անմիջապէս կերպարանափոխուելու եւ կերտանալու կարողութեամբ: Ոչ մէկ վախ ունի. կ'ըսէ Հայլէյ: Ծաշարանի մը մէջտեղը կը պայթեցնէ օֆերայի արիա մը, եւ անշուշտ ամէն ոք կը զարմանայ»:  
Պատկերասփիւռի մանկական յայտագիրներու պատրաստութեան մէջ 9 տարի աշխատելէ ետք Հայլէյ կը կարծէր, թէ հանդիպած էր ամէն տեսակ մանուկներու, սակայն Թալին զարմացուցած էր զինքը:

«Հրաշալի էր: Տարիներով մանուկներու հետ կ'աշխատիս, սակայն հազուադէպօրէն կը հանդիպիս մանուկի մը, որ կը ցնցէ քեզ. կ'ըսէ Հայլէյ: Թալին անոնցմէ մէկն է»:

Պատրաստեց՝  
**Լ. ԿԻԼԻՅԵԱՆ-ՍԻՄՊԵԱՆ**

**www.hamazkayin.com**

ԿՈՒՉՈՒԻ

Վաստատութիւն մը կարիք ունի վաճառող փորձառու ներկայացուցիչ օրինորդներու: Ամսական + փոխադրածախս + պոստի: Դիմել՝ հեռ. 01-844300:

ԿԱՐՉՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ

Պուրճ Վանուտ, «Արմենիա» պողոտայ, Զարաբապետարանի մօտ, Ա. յարկ, գրասենեակի կամ դարձանատան յարմար: Հեռ. 01-256015:

ԿՈՒՉՈՒԻ

Վաճառող շրջուն ներկայացուցիչ մը՝ ամսական եւ շահաբաժին: Ինքնաշարժ վարելու արտօնագիր ունենալը՝ պայման: Հեռ. 03-290777:

ՃԱԽՈՒ ԵՆ

Սթերանոց, 640 քառ. մէթր տարածութեամբ, 5,75 մէթր բարձրութիւն. Անթի-Լիաս, Սանթրո Հաժի կից:
Խանութիւն, 60,52 եւ 32 քառ. մէթր տարածութեամբ, իրենց անձնակազմ կազմաւորուով. Անթիլիաս, Սանթրո Հաժի կից:
Վաճառատուն 140 քառ. մէթր տարածութեամբ, 5,75 մէթր բարձրութեամբ, 3 ինքնաշարժի կազմաւորուով, Անթիլիասի շրջան:
Յարկաբաժին մը, 145 քառ. մէթր տարածութեամբ. 3 ցնջասենեակ, ջրհոր, ժէներատոր, էնթերֆոն, 2 ինքնաշարժի կառուար, արդիական ապահովական սարքաւորումով, Անթիլիաս շրջան:
Յուցասրահ՝ Metropolitan Hotelի մօտ, 150 քառ. մէթր տարածութեամբ, եւ 90 մէթր թերաս եւ 2 ինքնաշարժի կառուար, Հարշ Թապէի շրջան:
Դիմել՝ հեռ. 03-321251 եւ 03-321259 քիւերուով:

Advertisement for G. AYANIAN & SONS featuring various lighting fixtures and contact information: Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmaye, (01)447000-445396 - (03)627728/9 Fax: (01)265187-582357; E-Mail: gason@dm.net.lb www.ayanian.com

Advertisement for ԾՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌՈՇԱԿՐՈՒԹԵԱՆ, featuring a woman and text about jewelry and services: «Ազգակ» մէջ ազգային կամ անտարակն ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումները բնագիրը ընթերցողի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

Advertisement for Հարսանեկան Բարբերում, featuring a woman and text about hair services: Հարսանեկան Կերպում - Պ. Համուտ Հեռ.: 01-253008

ԽԱՉԲԱՆՈՒԹԻ 5291 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՉԱՐԵԱՆ

Chess puzzle grid with numbers 1-11 and a 11x11 board. Below the board are two columns of clues: 1. Շաղկապատ կամ ճոխարան - Անձնական դերանուն: 2. Բազմը - Պտղատեսակ: 3. Դահույց, բալետի - Գուլթան: 4. Խրճիթ - Ձի - Եզրիպտական աստուած: 5. Հիւսիսային: 6. Էլ Կրեթոյի ծննդավայրը - Արկադեան սոխակ - Յուցական անասուն: 7. Հերձուած - Անգոր: 8. Հերան շուք մասը - Կրկնուած բաղաձայններ - Մակրայական մասնիկ: 9. Պետական դահլիճի անդամ: 10. Նաեւ - Արական անուն: 11. Գիտական համայնավարութեան հիմնադիրը - Երգիչ:

Another chess puzzle grid with numbers 1-11 and a 11x11 board. Below the board are two columns of clues: 1. Դաստաճաղ թռչուններու խումբ: 2. Հեծանոց - Բազմութիւն - Ձայնանիշ: 3. Բազին: 4. Ականջ - Թփփուր: 5. Յրանսական դետ - Հնդկաստանի բաղկացուցիչ համայնքներէն (հակ.): 6. Ինքնավար - Ոչխարի ճարպոտ պոչ: 7. Յուցական անասուն - Յեսանձ - Սեւցած: 8. Եղբուքիւնը առարկայականօրէն ընկալող - Արեւելեան տիպոս: 9. Առարկայ - Յրանսական պետ: 10. Արտասովոր - Ձայնանիշ: 11. Մուրթ սեւ (հակ.) - Հայաստանի հնամասինը:

Answers for the puzzles: 1. ԱՐԿԱՐԱՅԻՆ 2. ԱՍՏՈՒՆ 3. ԱՍՏՈՒՆ 4. ԱՍՏՈՒՆ 5. ԱՍՏՈՒՆ 6. ԱՍՏՈՒՆ 7. ԱՍՏՈՒՆ 8. ԱՍՏՈՒՆ 9. ԱՍՏՈՒՆ 10. ԱՍՏՈՒՆ 11. ԱՍՏՈՒՆ

ՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ԱՍՏՂԵՐԸ

Star puzzle grid with numbers 1-11 and a 11x11 board. Below the board are two columns of clues: 1. Նոր (21 Մարտէն 20 Ապրիլ) Լաւ ստուգեցէք դրամատնային ձեռքը կարգի ներկայացուցիչները կամ կրնաք ըրած ըլլալ, ինչ որ սուղի կրնա՞յ նստիլ ձեր վրայ եւ ձեզմէ խնդրանք կանխարձանով ձեզմէն խնդրուի ծանուցումները բնագիրը ընթերցողի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:
2. Նոր (21 Ապրիլէն 21 Մայիս) Ամուսնական ձեռքը կանխարձանով ձեզմէն խնդրուի ծանուցումները բնագիրը ընթերցողի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:
3. Նոր (22 Յունիսէն 23 Յուլիս) Ձեր գործատեղիին մէջ պիտի կատարէք հանգիստ մը, որ դուրս պիտի ելլէ իր սահմանափակ տրամադրութեան եւ պիտի երկարի ամբողջ օրը:
4. Արեւիկ (24 Յունիսէն 23 Օգոստոս) Այսօր պիտի վերաշարժուի անցեալին եկած պատմութիւն մը, ինչ որ ժամանակին վերաբերած էր ձեր հայրտանքին: Մոռցէք եղածը, դարձուցէք այդ էջը, որուն վրայ յամեմատ իմաստ մը չունի:
5. ԱՌՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Փոքր տեղափոխութիւն մը պիտի կատարէք ձեր ասպարէզին մէջ: Օգտուեցէք այս յաւանքէն եւ ծանօթացէք ձեր գացած վայրին տեսարժան բնութեան եւ այլ գիտելիքներու:
6. ԱՅԻՌԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Ամիսը սկսելուն հետ այսօր պիտի ստորագրէք մտերմակերպ ձեր գացած վայրին տեսարժան բնութեան մտածեցէք ձեր հանգիստին մասին:
7. ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Փոխեցէք օրուան ձեր ծրագիրը, որպէսզի հոն ներմուծէք անձի մը հարցը եւ ուրախութիւն պարգեւէք ձեր սիրելի անձին: Եղէք լրջախոհ:
8. ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Գիտցէք օգտուիլ ձեր ֆիզիքական ուժէն: Կարելի է նաեւ ձեր հանգիստին մէջ իրականացնէք ձեր անաշարկուած գործերը: Այսպիսով գերհաջող մը չէք ունենար եւ սիրով կը կատարէք ձեր աշխատանքը:
9. ԱՅՏԵՂՆԱՒՈՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Ամսուան ընթացքին պիտի ունենաք պայմանով յաջողութիւն ձեր ասպարէզին մէջ: Այսօր յուրս պիտի ստանաք անձ մը, գոր կամաց-կամաց կորսնցուցած էիք ձեր մտէն: Ուրեմն, ժամէ քիչ քիչ փոխադրու ձեր վերաբերմանը կարգը:
10. ԱՅՏԵՂՆԱՒՈՐ (21 Յունուարէն 19 Փետրուար) Ամիսը պիտի յորդի սերով եւ աշխատանքով: Մեծ փոփոխութիւններու ժամը հասած է: Այսօր սակայն ձեր աշխատանքին մէջ պիտի տիրէ թիչ մը ցուրտ մթնոլորտ, ու դուք պիտի ստիպուիք ձեր սիրելի հանգիստին համար:
11. ԱՅՏԵՂՆԱՒՈՐ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ունիք ուժ ու կենսունակութիւնը՝ զիմակայելու բոլոր տեսակի հակասութիւնները: Այսօր ի վերջոյ պիտի գտնէք միջոցը՝ հարբելու համար թիրիմալու թիւն մը, գոր ունիք բարեկամի մը հետ:

Large advertisement for ԵՐԿՈՒՇԱՐԹԻ / ՅՈՒՅՆԱԿԱՆԳԵՍ / ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄՇԱԿՈՅԹ ԵՆԿԻՍ ՎԱՍՈՒՏԵԻ ԵՐԿՇԱՐԹԵԱՅ ԵՆԿԱՅԻ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ. Includes a portrait of a man and text about a religious or cultural event.

Table of events for ԷՆ. ԷԼ. 8:30 - Թաղամաս 9:00 - Սապաօ 12:00 - ԵՖէր էլ լեր 12:30 - Դանիլի դէմի 13:00 - Մարտի Հանա 14:00 - Եւրոնիւտ 14:30 - Լուրեր 15:00 - Մըջուար 17:00 - Ամերիկեան ֆիլմաշար 18:00 - Կենդանի Գծանկար 18:30 - Ապու Մըլիքի 19:30 - Լուրեր 20:15 - Մոտելիս 21:00 - Սահրա Ղըր 20:00 - Երեւանի Երկրաբանական թանգարանի «Վրոյ» վաւերագրական կարճ փայլեցից, երեկոյան ժամը 8:30ին, «Ալ Մառնա» բառարանային մէջ: Գիրքի արարական ցուցահանդէս. «Էքսփո Պէյրոս»-ի մէջ, մինչեւ 17 Նոյեմբեր: «Լիր ան Ֆրանսէ է թ'ան միգրը». ֆրանսագիր գրականութեան եւ մշակութիւնի նուիրուած տասնօրեակ, «Պիէլ» կեդրոնի մէջ, մինչեւ 11 Նոյեմբեր: «Հարմոնի տը սուար», երաժշտական երեկոյ. կը ներկայացուի Մոցարթի «Թի 41 ձիւփիթը» համանուն գրք, երեկոյան ժամը 6:30ին. Ֆրանսական Մշակութաւոր կեդրոնի մէջ: Գործերու եւ ծածկոցներու ցուցահանդէս, մինչեւ 10 Նոյեմբեր, «Պրոմ տը Պէյրոս»-ի մէջ: «Ե՛ք մուս, չէ՛ թուս», իրանացի եւ եւրոպացի արվեստագետներու գործերու ցուցահանդէս, քաղաքացիական «Ապարէ» շէնք, մինչեւ 9 Նոյեմբեր:

Table of events for ԷՆ. ՊԻ. ԷՆ. 15:00 - Լուրեր 16:00 - Սիւսա 17:30 - Սինեմա/35 mm. 18:00 - Տիւրքի 18:45 - Բայր Իսրայիլ 19:00 - Լուրեր 20:00 - Սարաֆիա 20:30 - Մարկապան յայտագիր 22:00 - Մյմասայա 23:00 - Պուրա, Խրքիսատ, Թաքա 23:30 - Թահրիք ալ էսուի 23:00 - Վաւերագրական 15:30 - Չուի ին 17:00 - Քալիփոս 18:00 - Սոհա ու սահուա 20:30 - Արաբական ֆիլմ 22:00 - Ամերիկեան ժապաւէն՝ «Քիւկի ին կրին քէրէլ»



Table of events for ԷՆ. ՊԻ. ՍԻ. 7:00 - Սի. Էն. Էն. ի լուրեր 7:30 - Լէրի Քիւկի լայլ 08:25 - Մա ըլաք իլլա չայֆա 09:00 - Էժիա սիդրո 20 10:30 - Նահարքում սայիտ 12:30 - Չաուայա 13:00 - Մորէիա 14:00 - Մէն էսարն քալաի 15:00 - Լուրեր 15:15 - Թի թայմ 16:45 - Լիր ան Ֆրանսէ 17:30 - Թէլիփոն 18:45 - Մըն Էժըր Էլէնա 19:45 - Աժուպ Լուպանա 19:50 - Արաբերէն լուրեր 21:30 - Ամերիկեան ժապաւէն՝ «Էտիքըրտ թու լաւ» 22:30 - Ուէպ ուիկկ 00:00 - Ամերիկեան ժապաւէն՝ «Պարեկոնա»

Table of events for ԷՆ. ՊԻ. ՍԻ. 7:00 - Լուրեր 8:30 - Այլաձ ալ սապահ 12:00 - Խոհանոց 13:00 - Տիէլ ինֆո 13:05 - Տէլքըն քէպ 14:00 - Անգլերէնով լուրեր 14:20 - Տրանսերէնով լուրեր 14:40 - Հայերէնով լուրեր 15:30 - Վիտէ քիլի 06:00 - Սուրան օրագիր 08:30 - Մայր թատրոն-80. ժամ Էլոյեան 09:05 - Հնոսասաներկայացում. Գարբիէլ Սուրիոկեան «Եւ այլ կամ նոր Դիոգենես», «Գիշերուան սարը խեր է» 11:00 - Հայրուր 11:20 - «Հորովել» 12:00 - Լուր 12:05 - Non-stop 12:20 - Եթէ, իրօք... 12:30 - Non stop

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՅՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ԲՈՒՌՆ ՊԱՅՔԱՐ՝ ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳ ԴԻՐՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Ժաք Ապարտոնանո (ձախից), որ կը սոցէ իր ճշանակած կողմ

Ֆրանսայի ֆուտպոլի ֆուտբոլիստներն 13րդ հանգրուանին, Օքսէն թէւ 3-1 արդիւնքով պարտուած հեռացաւ Լանսի դաշտէն (7րդ), սակայն մնաց պարագլուխի դիրքին վրայ՝ մէկ կէտի առաւելութիւն ունենալով իր ետին գտնուող երեք մրցակիցներուն վրայ, որոնք ունին 23ական կէտ:

Օքսէնի կրած պարտութենէն միակ օգտուող խումբը պիտի ըլլար Փարիզ Մէն ժերմէն, որ յաղթանակ մը արձանագրելու պարագային պիտի գրաւէր պարագլուխի դիրքը, սակայն անիկա 3-1 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեց Սրուանէն, այս վերջինին դաշտին վրայ: Սթեֆան Նորո (8րդ) եւ Լիւստովիք Աուար (50րդ եւ 67րդ) նշանակեցին Սրուանի կողմը, իսկ Ֆրեւտերիք Տեիլը՝ Մէն ժերմէնի կողմը (33րդ):

Լանսի իր յաղթանակը արձանագրեց շնորհիւ Ռիկուպի Սոնիի (37րդ): Անթուան Սիպիերսքիի (45րդ) եւ Էրիք Սիքորայի (90րդ) նշանակած կոլերուն: 5րդ վայրկեանին Ամաիէ Ֆայէ բացած էր մրցումին հաշիւը:

Նիլս յաղթանակի համապօր հաւասարութիւն մը արձանագրեց Լիւնի հետ, երբէքցումին 94րդ

վայրկեանին ժաք Ապարտոնանո նշանակեց իր կապին հաւասարութեան կողմը (2-2): Անոր խմբակիցը՝ Քապա Տիաուարա բացած էր մրցումին հաշիւը (40րդ), մինչ դաշտին տէրերուն կողմը նշանակեցին Սոնի Անտերսոն (49րդ) եւ Քրիսթֆ Տեյմոր (67րդ):

«Վելուարոն»-ի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր 45 հազար համակիր, Մարսէյ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մոնփելիէն, հակառակ անոր որ անիկա Ա. Կիսախաղը ամբողջութեամբ շարունակեց տար մարպիկով, Ֆապիօ Սելտիսիի կարմիր քարտ ստանալէն ետք (42րդ): Իպրահիմա Պաքայոքո (31րդ) եւ Ֆրանք Սիլվեսթրը (60րդ) սխալմամբ իր բերդէն ներս) նշանակեցին յաղթական կապին կողմը:

Ստորեւ՝ 13րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Սրուան - Փարիզ Մ. ժ.	3-1
Լիոն - Նիս	2-2
Լանս - Օքսէն	3-1
Պաքայոքո - Լիլ	1-0
Մարսէյ - Մոնփելիէ	2-0
Մոնպեր - Լը շարլ	1-1
Ռեէն - Ամարսիօ	0-0
Սոչո - Սքրապտուրկ	2-0
Թրուա - Կեկկան	0-2
Նանց - Պորտո	0-0

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1.- Օքսէն	4ԿՏ
2.- Փարիզ Մ. ժ.	24 (18-13)
3.- Նիս	23 (22-11)
4.- Մարսէյ	23 (18-7)
5.- Լիոն	23 (16-15)
.....	.....
18.- Սոնիէ	10 (9-18)
19.- Ռեէն	9 (9-18)
20.- Թրուա	8 (8-18)

**ՃԱՏՐԱԿԻ 35ՐԴ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ 8ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐԳՈՒՄՆԵՐՈՒՆ, ԼԻՔԱՆԱՆԻ ԱՂՉԿԱՆԳ ԿԱԿՄՐ 2-1 ԱՐԴԻՆՔՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՈՒՆԵՑ ՊՐՈՒՆԱՅԻ ԿԱԿՄՐ: Զաղթանակներ արձանագրեցին Քնարիկ եւ Սիւլան Մուրատեաններ:**

Նշենք, որ 7րդ հանգրուանին Լիբանան 2-1 արդիւնքով պարտուած էր Փորթո Ռիթոյէն: Լիբանանի կապին միայն յաղթանակ արձանագրողը՝ Քնարիկ Մուրատեանն էր:

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՅՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ԼԻՎԵՐՓՈՒԼ ԱՄՐԱՊՆԴԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐԸ

Անգլիոյ ֆուտպոլի ֆուտբոլիստներն 12րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Լիվերփուլ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, աւելիով ամբողջեց իր դիրքը, երբ արձանագրեց եղանակի իր Յոլ յաղթանակը, «էնֆիլտ»-ի մէջ, 4:4 հազար համակիրներու ներկայութեան 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Ուէսթ Համը, շնորհիւ՝ Մայքըլ Օուլընի նշանակած երկու կոլերուն (28րդ եւ 55րդ):



Մայքըլ Օուլըն՝ Լիվերփուլի երկու կոլերուն հեղինակը

Անիկա այժմ չորս կէտի առաւելութիւն ունի երկրորդ դիրքը գրաւող Արսենալի վրայ, որ բախտաւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Ֆուլհէմի «ոլդ» կողմը նշանակեց Սթիւ Մարլէ՝ սխալմամբ իր բերդէն ներս (31րդ):

Արսենալ իր կարգին չորս կէտի առաւելութիւն ունի երրորդ դիրքը գրաւող Մանչեսթր Եունայթըտի վրայ, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ստուքհոլմի «Օլմ Թրէ-Ֆորտ»-ի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր շուրջ 68 հազար համակիր, Ֆիլ Նելի (15րդ) եւ Տիեկո Յորլան

Թոթենհամի եւ Չելսիի միջեւ վերջ գտաւ 0-0 արդիւնքով, 36 հազար համակիրներու ներկայութեան:

Էվերթըն բարձրացաւ 6րդ դիրք, 1-0 արդիւնքով յաղթական վերադարձին իր կողմը:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Պլեյպրըն - Ասթոն Վիլա	0-0
Չարլթոն - Մանչեսթր Եունայթըտ	1-1
Ֆուլհէմ - Արսենալ	0-1
Է. Է. Սիթի - Էվերթըն	0-1
Թոթենհամ - Չելսի	0-0
Պրիմհիլիք - Պոլլըն	3-1
Լիվերփուլ - Ուէսթ Համ	2-0
Մանչեսթր Եունայթըտ - Ստուքհոլմի «Օլմ»	2-1
Ուէսթ Պրիմհիլիք - Մանչեսթր Սիթի	1-2
ԱՅՍՕՐ	.....
Նիւքասլ - Միլուոլ	4ԿՏ
1.- Լիվերփուլ	30
2.- Արսենալ	26
3.- Մանչ. Եունայթըտ	22
4.- Չելսի	20
5.- Թոթենհամ	20
.....	.....
18.- Սանտըրլէնտ	10
19.- Ուէսթ Պրիմհիլիք	10
20.- Պոլլըն	8

## ԲԱՆԻՍ

### ԻՆԹԷՐ ՄԻԼԱՆ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Իտալիոյ ֆուտպոլի ֆուտբոլիստներն 13րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ինթեր Միլան արձանագրեց եղանակի իր վեցերորդ յաղթանակը, 2-0 արդիւնքով յաղթական վերադարձալէ ետք Քոմոյի դաշտէն (16րդ), որ ցարդ միակ խումբն ըլլալով յաղթանակ չէ արձանագրած: Քրիսթիան Վիերի (57րդ) եւ Ալվարո Ռեքոպա (65րդ) նշանակեցին Ինթերի երկու կոլերը:

Միլան քաղաքի երկրորդ խումբը՝ Ա. Սէ. Միլան, իր կարգին, յաղթանակ մը արձանագրեց, նոյն արդիւնքով պարտութեան մատնելով Ռեճինան, որ մրցումը ասարտեց տար մարպիկով Սորիլի Վարկասի կարմիր քարտ ստանալէն ետք (18րդ): Ֆիլիպո Ինցակի (20րդ) եւ Ռիվայտո (63րդ) նշանակեցին յաղթական կապին կողմը:

Ինթերի նման ցարդ պարտութիւն չկրող երկրորդ խումբը՝ Եուվերթուս (3րդ) եւս յաղթանակ մը արձանագրեց, երբ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Մոտենալի

դաշտէն, շնորհիւ Ալեանտրո Տէլ Փիեռոյի նշանակած կոլին (74րդ): Դաշտին տէրերը մրցումը ասարտեցին տար մարպիկով, երբ 83րդ վայրկեանին, Օմար Միլանեթթօ կարմիր քարտ մը ստացաւ (83րդ):

Ա. Է. Ռոմա 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց իր հիւրին՝ Փերուճիաի հետ, հակառակ անոր որ 37րդ վայրկեանին Ֆրանչէսքօ Անթոնիոյի կարմիր քարտ մը ստացաւ: Քրիսթիան Փանուչի (67րդ) եւ Ֆրանչէսքօ Թոթի (71րդ) նշանակեցին դաշտին տէրերուն կողմը:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Սրալանթա - Փիաչենցա	2-0
Քոմո - Ինթեր Միլան	0-2
Էմիլիոլի - Լագիօ Ռոմա	1-2
Ա. Սէ. Միլան - Ռեճինա	2-0
Մոտենալ - Եուվերթուս	0-1
Ա. Է. Ռոմա - Փերուճիա	2-2
Ուտինէլե - Պոլլոնիա	0-0
Թորինո - Պրեմիէ	0-0

## ՏԱՐՈՐԻՆԱԿ «ՄՐՅԱՆԻՇ» ՄԸ ՖՈՒԹՅՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Անթուանարիւղի մէջ (Մատակաւար) ֆուտպոլի աշխարհի նոր մրցանիշ մը հաստատուեցաւ, երբ «Սթաւ Օլիմպիք Լ'Էմիանէ» 149-0 արդիւնքով պարտուեցաւ իր մրցակիցին՝ Ա. Սէ. Ատեմայէն, պիտանուութեան գծով իր կատարած մրցումին ընթացքին:

Չարմանալին հոն է, սակայն, որ այդ 149 կոլերն այնչափ արագ չ'էին մարպիկները՝ դիտումնաւոր կերպով իրենց բերդէն ներս, մրցումին պահանջար հասնելու իսկ տրուած:

Ասիկա բողոքի արտայայտութիւն մըն էր Ատեմայի հանդէպ, որ անցած շաբաթ շահած էր երկրին ֆուտբոլիստները:

Շատ հաւանաբար Մատակաւարի ֆուտպոլի ֆետերասիոնը ծանր պատիժներ ստանան այս խումբին դէմ, մինչ ոչինչ կը յայտարարուի հաստատուած նոր «մրցանիշին» մասին...

## ՊՈՒՆՏՍՆԻԿԱ

### ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՏ ԿՐԵՅ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ ֆուտպոլի ֆուտբոլիստներն (Պունտսնիկա) 11րդ հանգրուանին, պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնխի կրեց եղանակի իր երկրորդ պարտութիւնը, երբ 2-0 արդիւնքով պարտուած հեռացաւ վերտոր Պրեմընի դաշտէն (Ֆրդ): 40 հազար համակիրներու ներկայութեան, Պրեմըն իւրաքանչիւր կիսախաղի յաղկեցաւ մէկ կոլ նշանակելով Պայէրնի բերդէն ներս (17րդ եւ 80րդ):

Թէլէ իր այս կրած պարտութենէն ետք անիկա մնաց առաջին, սակայն 2րդ դիրքը գրաւող Պորտսմա Տորթմունտ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, միայն երկու կէտով ետ է անկէ: Տորթմունտ իր դաշտին վրայ արձանագրեց 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը, երբ մրցումին վերջին վայրկեանին Համպթրի մարկի Քիմ Քրիսթիանսը նշանակեց հաւասարութեան կոլը: Աւելի քան 68 հազար համակիրներու ներկայութեան թմամաս Ռոզիթի նշանակեց Տորթմունտի եւ մրցումին առաջին կոլը (67րդ):

Շալթէ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ վերջին դիրքը գրաւող Քոլտուաի դաշտէն, շնորհիւ Անտրէաս Մէյլըրի նշանակած կոլին (79րդ):

Պայէր Լեյքերսըն (14րդ) կրեց եղանակի իր հինգերորդ պարտութիւնը, իր հիւրին՝ Շիւթֆելդերի (7րդ): Սիլվիօ Մէսսըր նշանակեց մրցումին «ոլը» կոլը (19րդ):

Նախափորձին դիրքը գրաւող Քայլերսլայտերն, որ ցարդ արձանագրած է միայն մէկ յաղթանակ, 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Հանգա Ռոսթրի հետ:

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Վերտոր Պրեմըն - Պայէրն Միւնխի	2-0
Պորտսմա - Լեյքերսըն	3-0
Քոլտուա - Շալթէ	0-1
Նիւքասլ - Պոր. Մեօնշընկլայտայալ	2-1
1860 Միւնխի - Արմիլիա Պիլքիլտ	3-1
Համպթր 96 - Վոլֆսպուրկ	3-1
Հանգա Ռոսթր - Քայլերսլայտերն	2-2
Պայէր Լեյքերսըն - Շիւթֆելդեր	0-1
Պորտսլա Տորթմունտ - Համպթր	1-1

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Պայէրն Միւնխի	4ԿՏ
2. Պորտսլա Տորթմունտ	23
3. 1860 Միւնխի	21
4. Վերտոր Պրեմըն	20
5. Շալթէ	20
.....	.....
16. Պոր. Մեօնշընկլայտայալ	11
17. Քայլերսլայտերն	7
18. Զոլդեր	5

## ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ՆԷՅԵՑ ԵՒ ՔԻՆԿԶ՝ ԵՐԵՔԻ ՎՐԱՅ ԵՐԵՔ

Էն. Պի. Էյի շաբաթավերջին կայացած մրցումներուն ընթացքին, Նիւ Ճրքի Նէթը եւ Սաքրամենթօ Քիւնկ ցարդ կը հանդիսանան այն միակ երկու խումբերը, որոնք իրենց կատարած երեք մրցումներն այս յաղթանակով ասարտեցին, թէեւ տակալին կան այլ խումբեր, որոնք կրնան արձանագրել իրենց երրորդ յաղթանակը, սկստիւնէն սլով, որ անոնք ցարդ երկուքական մրցում կատարած են:

Ստորեւ՝ անցեալ շաբաթավերջին արձանագրուած մրցումներուն արդիւնքները.

Նիւ Ճրք - Նիւ Յորք Նիքս	117-107
Սաքրամենթօ Քիւնկ - Մենֆիս Կրիպիլ	116-99
Եուրպ Ճէյ - Կոլտրն Սթէյթ Սորթրոյ	101-92
Տայաս Մալթրիքս - Տեօնիքս Սանկ	97-83
Հիուսթըն Ռոքէթս - Թոնոնթօ Ռեյթրոյ	88-76
Օրլանտօ Մէճիք - Միլուոքի Պաքս	100-90
Նիւ Օրլինս - Մայնի Հիթ	100-95
Տեննիս Նակթէք - Փորթլէնթ Թրէյլ Պլէյ-Կրպ	96-79

Նիւ Ճրքի Նէթը - Ինտիանա Փէյթրոյ 102-91  
Տիլթոնիք Փիսթրնկ - Մենֆիս Կրիպիլ 109-86  
Միլուոքի Վոլվոյ - Օրլանտօ Մէճիք 111-105  
Ֆիլադելֆիա Սիքսթրոյ - Նիւ Յորք Նիքս 98-86

